

ՀՈՒՎԱԾՆԵՐ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՔՁԳԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

2. Գ. ՄԱՆՈՒԶԱՐՑԱՆ

Ժողովուրդների փոխհարաբերություններն սկսվել են խոր հնադարում: Շահագործողական հասարակարգերում երբեմն բարեկամական, երբեմն թշնամական, բայց հիմնականում անհաշտելի հակասությունների մեջ են եղել ուժեղ ու թույլ հարևան ժողովուրդները: Եվ միշտ էլ փոքր ու ճնշված հանրույթների լավագույն զավակները, նրանց պետական, հասարակական ու մշակութային հայրենասեր գործիչները ուղիներ են փնտրել ճնշված ժողովուրդների անկախության համար: Բազմաթիվ սերունդների դարավոր որոնումների ընթացքում, սակայն, միայն մարքսիզմի հիմնադիրներին հաջողվեց հայտնագործել ճնշված ժողովուրդների ազատագրության իրական ուղիները, ազգային հարցի լուծումը օրգանապես կապելով հասարակության սոցիալական կառուցվածքի և սեփականության տիրապետող տիպի հետ: Ահա թե ինչու Կ. Մարքսը և Ֆ. էնգելսը ազգային ճնշման ոչնչացման կարևոր պայմանը համարում էին սոցիալական ճնշման ոչնչացումը¹:

Իմպերիալիզմի դարաշրջանի գիտական վերլուծության հիման վրա Վ. Ի. Լենինը ստեղծագործաբար զարգացրեց Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի ուսմունքն ազգային հարցի վերաբերյալ, նրա լուծման գլխավոր ուղին համարելով պրոլետարիատի դասակարգային պայքարը քաղաքական իշխանության նվաճման և շահագործումից զերծ հասարակության ստեղծման համար²:

Իսկ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինը մեր երկրի ժողովուրդների սերտ դաշինքի գլխավոր երաշխիքը համարում էր ազգերի հարաբերություններում փոխադարձ վստահությունը, կամավոր համաձայնությունը, անհավասարության ամեն մի ձևի բացառումը³:

Միայն հեղափոխության հաղթանակից հետո ստեղծվեց մի հասարակարգ, որը ձեռնարկեց ազգային անհավասարության վերացման գործը, ստեղծեց նյութական, քաղաքական, իրավական պայմաններ՝ ամեն մի ազգի ու ժողովրդի համակողմանի զարգացման, նրանց միջև իսկական եղբայրական հարաբերությունների հաստատման համար: Բնականաբար, ազգային փոխհարաբերությունների կատարելագործման խնդիրները առավել սրություններ են դրվում ու գործնական կիրառում ստանում բազմազգ պետություններում: Պատահական չէր, որ ազգային հարցը առաջնայիններից մեկն էր ՌՍԳԲԿ 2-րդ համագումարում, բոլշևիկների կուսակցության ստրատեգիան ու տակտիկան մշակելիս:

ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրությունը ևս ընդգծում է ազգային հարաբերու-

¹ Տե՛ս Կ. Մարքս և Ֆ. էնգելս, *Ընտիր երկեր*, հ. 1, եր., 1972, էջ 160—162:

² Տե՛ս Վ. Ի. Լենին, *ԵԼԺ*, հ. 25, էջ 363

³ Տե՛ս Վ. Ի. Լենին, *ԵԼԺ*, հ. 40, էջ 51—52:

թյունների կատարելագործման անհրաժեշտությունը, նշելով, որ մեր սոցիալիստական պետության մեջ, հարյուրից ավելի ազգերի և ազգությունների համատեղ աշխատանքի ու կյանքի գործընթացում, օրինաչափորեն ծագում են ազգային հարաբերությունների կատարելագործման նոր խնդիրներ⁴:

Թեև ակնհայտ են ՍՍՀՄ-ում ապրող ազգերի ու ազգությունների փաստական հավասարության հաստատման քնազավառում ձեռք բերված նվաճումները, բայց այդ նվաճումները, ինչպես ՍՄԿԿ 27-րդ համագումարի քաղաքական հաշվետվության մեջ նշում է ընկ. Մ. Ս. Գորբաչովը, «...ազգային պրոցեսների անպրորկեմայնության պատկերացումներ չպիտի ստեղծեն: Հակասությունները ներհատուկ են ամեն մի զարգացման, դրանք անխուսափելի են նաև այդ ոլորտում: Գլխավորն է տեսնել դրանց մշտապես ծագող ասպեկտներն ու կողմերը, որոնք ու ժամանակին ճիշտ պատասխաններ տալ կյանքի առաջադրած հարցերին»⁵: Իսկ երբ կյանքն այսօր առաջադրում է դեմոկրատիայի և ինքնակառավարման ընդլայնում, հասարակական կյանքի վերակառուցում, ազգային ինքնագիտակցության բարձրացում, առանձնակի կարևորություն է ստանում ծագող հարցերի ժամանակին և արդարացի լուծումը՝ ի շահ յուրաքանչյուր ազգի և ազգության բարգավաճման, ի շահ նրանց հետագա սերձնցման, ի շահ բովանդակ հասարակության⁶:

ՍՄԿԿ-ի գիտականորեն հիմնավորված ազգային քաղաքականությունը խարսխվում է սոցիալիստական ազգերի հատկանիշների բազմազանությունը հաշվի առնելու, նրանց զարգացման միտումները մեկնաբանելու վրա, առանց որոնց անհնար է բացահայտել ազգային հարաբերությունների կատարելագործման ընթացքը պատմականորեն տեսանելի ապագայում:

Այն հարցերին, թե ի՞նչ է ազգը, ե՞րբ է այն ձևավորվել և զարգացման ինչպիսի՞ միտումներ է ունեցել, առաջին անգամ գիտական պատասխան տվեցին Կ. Մարքսը, Ֆ. էնգելսը և Վ. Ի. Լենինը, համարելով այն մարդկանց սոցիալ-պատմական հանրություն, որն առաջացել է դասակարգային հասարակության զարգացման որոշ աստիճանում:

Մարքսիզմի հիմնադիրների ելակետային դրույթները ի մի բերելով՝ Ստ. Շահումյանը 1906 թ. սահմանում է. «Ազգությունը միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, կապված որոշ չափով ընդհանուր ծագումով և անցյալով, որոշ չափով ընդհանուր ֆիզիկական ու հոգեկան նկարագիր ունեցող, միևնույն լեզվով խոսող, մեծ մասամբ միևնույն կրոնը դավանող, և այդ բոլորով հանդերձ՝ մի ամբողջական տնտեսական-հասարակական-քաղաքական օրգանիզմ կազմող բազմություն»⁷:

Ի. Վ. Ստալինի կարծիքով «Ազգը մարդկանց պատմականորեն կազմավորված կայուն ընդհանրություն է, որ ծագել է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի և կուլտուրայի ընդհանրության մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրության բազայի վրա»⁸:

Մարքսիզմի հիմնադիրների ելակետային դրույթների և Ս. Շահումյանի ու Ստալինի սահմանումների վրա էլ խարսխվեցին ազգային հարցով զբաղվող սովետական գիտնականների հետագա ուսումնասիրությունները: Ստալինի անձի պաշտամունքի ժամանակաշրջանում նույնիսկ տիրապետում էր այն

⁴ ՍՄԿԿ ծրագիր, Եր., 1986, էջ 59:
⁵ ՍՄԿԿ 27-րդ համագումարի նյութերը, Եր., 1986, էջ 74:
⁶ Տե՛ս ՍՄԿԿ 1987 թ. հունվարյան պլենումում Մ. Ս. Գորբաչովի արտասանած՝ ճառը, «Սովետական Հայաստան», 28 հունվարի 1987 թ.:
⁷ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Եր., 1976, էջ 307:
⁸ Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. II, էջ 379:

մտայնությունը, թե իբր նա է առաջինը տվել ազգի բնորոշումը և բացահայտել ազգային շարժումների էությունը: Այդ իսկ պատճառով, անհատի պաշտամունքի մերկացման հետ միասին, ազգային հարցով զբաղվող մասնագետների մի մասը կասկածանքի տակ դրեցին նաև որոշ հատկանիշների իրական լինելը: Հայտարարելով, որ սովետական պետության այժմյան ազգերը ամբողջապես պահպանել են միայն ազգային լեզվի ընդհանրությունը, նրանցից ոմանք գտնում էին, որ ազգի մյուս հատկանիշները արդեն կորցրել են իրենց վաղեմի նշանակությունը⁹:

Ուսումնասիրողների մի մասն էլ գտնում էր, որ Ստալինը ազգային հարցի տեսարան չէ, նա միայն ամփոփել է ազգային ընդհանրության այն հատկանիշները, որոնք ժամանակին, տարբեր առիթներով բացահայտել էին մարքսիզմի հիմնադիրները, հետևաբար այդ սահմանումը ոչ մի փոփոխության կարիք չունի¹⁰:

Քանի որ ազգը պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն է, այն սահմանելու համար պետք է պատմական մոտեցում ունենալ, պետք է ուսումնասիրել նրա բոլոր կողմերը. ինչպես նշում է Վ. Ի. Լենինը՝ «բոլոր կայերն ու «միջնորդավորումները»¹¹: Այս դիրքերից ելնելով՝ ընդհանրապես ազգի և մասնավորապես սոցիալիստական ազգի գծերը ամբողջովին բացահայտելու համար անհրաժեշտ է նախ պարզել, թե ինչ հատկանիշներով է տարբերվում մի ազգը մյուսներից և ինչ հատկանիշներով՝ սոցիալիստական ազգը մարդկային նախորդ հանրություններից:

Մի ազգը մյուսներից զանազանող հատկանիշներն ըստ էության ազգի էթնոտարբերիչ հատկանիշներն են, որոնց մեջ մտնում են՝ 1. տարածքային, 2. ծագման, 3. լեզվի և 4. հոգեկան կերտվածքի ընդհանրությունները:

Սոցիալիստական ազգը նույն էթնոսի նախորդ հանրություններից զանազանող հատկանիշներն են՝ 1. տնտեսական կյանքի, 2. սոցիալ-դասակարգային կառուցվածքի, 3. քաղաքական համակարգի և գաղափարախոսության ընդհանրությունները: Սրանք ազգի հանրության զարգացման մակարդակի բնույթը որոշող հատկանիշներն են:

Թեև այս տերմիններն ու ձևակերպումները հետագա ճշգրտման ու ամբողջացման կարիք կունենան, բայց և այնպես, մեր ներդրումը այս բնագավառում առաջին հերթին համարում ենք հենց այս բաժանումը, քանի որ ազգի հատկանիշների ավանդական խառը քննությունը հաճախ կանգնեցնում էր փակուղու առջև:

Հայտնի է, որ ազգի հատկանիշներ համարվել են տնտեսական կյանքի ընդհանրությունը, կրոնը, պետությունը: Շատերը առարկել են, պատճառաբանելով, թե դրանք չեն կարող ազգի հատկանիշ լինել, որովհետև նրանք բազմաթիվ ազգերի մոտ դրսևորվել են նույն ձևով: Այժմ, եթե տնտեսական կյանքի, պետության, կրոնի, սոցիալ-դասակարգային կառուցվածքի ընդհանրությունները դիտենք ոչ թե էթնոսի, այլ որևէ կոնկրետ էթնոսի զարգացման մակարդակի հատկանիշ, ապա առաջադրված շատ հարցեր իրենց լուծումը կըստանան:

Տարածքային ընդհանրություն ասելով նկատի ունենք ոչ թե երկրի այն

⁹ Տե՛ս Ե. Մ. Жуков. XXII съезд КПСС и задачи советских историков.—«Вопросы истории», 1961, № 12, էջ 9: Հմմտ. Հ. Աղաբաջյան, Հիմնովին առարկում ենք, «Լենինյան ուղիով», 1964, № 3, էջ 105—112:

¹⁰ Տե՛ս Ա. Եղիազարյան, Սոցիալիստական ազգի հատկանիշների հարցի շարքը, «Լենինյան ուղիով», 1963, № 9, էջ 78:

¹¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 360:

հատվածը, որը գտնվում է որոշակի պետության գերիշխանության ներքո, այլ յուրաքանչյուր ժողովրդի հայրենիքը, պատմականորեն նրան պատկանող բնատարածքը՝ իր բնությամբ, բնակչությամբ, ստեղծած արժեքների համակարգով: Տարածքի դերի ճիշտ ըմբռնումը ժողովուրդների կյանքում այսօր նույնպես կարևոր է: Հայտնի է, որ մինչև մարքսիզմի երևան գալը գոյություն ունեին զանազան կարծիքներ հասարակական կյանքում տարածքի դերի ու նշանակության մասին: Այն երբեմն անտեսվում էր, երբեմն էլ համարվում հասարակության զարգացման հիմնական շարժիչ ուժը: Առանց ուսումնասիրելու, թե ինչպիսի փոխհարաբերություններ գոյություն ունեն հասարակության և նրան շրջապատող բնական միջավայրի միջև, անհնար է ճիշտ հասկանալ որևէ ժողովրդի նյութական ու հոգևոր կյանքի զարգացման ընթացքը: Օրինակ, պատմական Հայաստանի որսառատ անտառները պայմաններ են ստեղծել որսորդության, ընդարձակ սարահարթերն ու մարգագետինները անասնապահության, բերրի հողերն ու ջրառատ գետերը՝ հողագործության, օգտակար հանածոները՝ մետաղամշակության ու արհեստագործության, տարանցիկ առևտրի մայրուղիները՝ առևտրի զարգացման համար:

Հայ ազգային հոգեկերտվածքի վրա մեծապես ազդել է նաև քաղաքական միջավայրը, միշտ էլ աշխարհակալ պետությունների արանքում գտնվելու հանգամանքը: Եթե մինչև 612 թ. (մ. թ. ա.) ձևավորվող հայ ժողովուրդը տնտեսական, քաղաքական, մշակութային սերտ հարաբերությունների մեջ էր գտնվում Ասորեստանի աշխարհակալության հետ, դրանից հետո սկսվեց մեղապարսկական տիրապետությունն ու ազդեցությունը, իսկ 331 թ. (մ. թ. ա.) Գավգամելայի ճակատամարտից հետո պարսիկների տիրապետությունը հայկական բարձրավանդակում փոխարինվեց հունա-հռոմեականով: Երկու աշխարհակալությունների միջև ընկած հայ ժողովուրդը մեկընդմիջտ կանգնեց քաղաքական ծանր երկրնորանքի առաջ: Այս իրավիճակը պահպանվեց ինչպես 387 թ. Հայաստանը Պարսկաստանի և Հռոմի միջև բաժանվելուց հետո, այնպես էլ 1555 թ. սկսած, երբ Հայաստանը բաժանվեց Պարսկաստանի ու Թուրքիայի միջև: 1828 թ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո այս իրավիճակը շփոխվեց:

Հայ ժողովրդի համար տարածքային ընդհանրությունն իր առանձնահատուկ դրսևորումն ունի նաև այսօր: Ներկայումս պատմական Հայաստանի մեծ մասը գտնվում է Օսմանյան Թուրքիայի կազմում, իսկ Արևելյան Հայաստանի զգալի մասը՝ Նախիջևանը և Ղարաբաղը՝ Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմում, հանգամանք, որ չի կարող չազդել տվյալ ժողովրդի տնտեսության, հոգեբանության, հոգեկերտվածքի վրա:

Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո, 1921 թ. հուլիսի 2—7-ը տեղի ունեցած կովկասյան բյուրոյի արտակարգ պլենումում Ղարաբաղի ինքնորոշման համար թեև հանրաքվեի մի քանի տարբերակներ առաջարկվեցին, բայց և այնպես վարչականորեն որոշվեց՝ «Հաշվի առնելով Ղարաբաղի տնտեսական սերտ կապերը Ադրբեջանի հետ և համերաշխության ապահովումը մուսուլմանների և հայերի միջև, թողնել նրան Ադրբեջանի կազմում, տալ լայն ավտոնոմ իրավունքներ»¹²:

Իսկ Նախիջևանը, Թուրքիայի պահանջով, 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով նույնպես հանձնվեց Ադրբեջանին¹³:

¹² С. В. Хармандарян, Ленин и становление закавказской федерации 1921—1923. Ер., 1969, էջ 101:

¹³ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), Եր., 1972:

Ոչ մի օրյեկտիվ հիմքով չպատճառաբանված այդ լուծումը հետևանք էր 20-ական թվականների միջազգային բարդ իրավիճակի, Հայաստանի համար նախընթաց շրջանում ստեղծված ծանր կացություն և ժամանակի հախուռն այլ իրադարձությունների: Այժմ, սոցիալիստական դեմոկրատիայի ընդլայնման ու հասարակական կյանքի վերակառուցման ժամանակաշրջանում նորից վեր հանվեց նախընթաց ժամանակների վրիպումների շտկման արդար պահանջը, ազգային հարաբերությունների, ազգային պետական շինարարության կատարելագործման անհրաժեշտությունը: Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ 1988 թ. փետրվարյան պլենումում արտասանած ճառում նշեց. «Այսօր մենք խոսում ենք երկրի բոլոր ազգերի և ազգությունների ազգային ինքնագիտակցության աճի մասին, ազգային զգացումների դրսևորման մասին (ինչը երբեմն ի հայտ է գալիս ձևափոխված կերպով): Սրանք բոլորը կենդանի հարցեր են և դրանք պետք է լուծել...: Պետք է մտածել նաև հանրապետությունների միջև կապերի հետագա զարգացման, նրանց իրավունքների ամրապնդման ձևերի մասին»¹⁴:

Ազգի էթնոտարբերիչ երկրորդ հատկանիշը ծագման ընդհանրությունն է, որը հիմնականում արտահայտվում է որոշակի էթնոսի պատկանելու մարդկանց զգացումով, որն էլ նրանց համախմբում է մեկ հասարակական ընդհանրության մեջ: Ծագման ընդհանրության վրա է խարսխվում էթնիկական և ազգային պատկանելության ընդհանրության ինքնագիտակցությունը: Ծագման ընդհանրությունը ավելի հստակ է դրսևորվում մարդաբանական տիպի միատեսակության մեջ: «Ընդհանուր ծագումը և ընդհանուր միջավայրը, — նշում է Ստ. Շահումյանը, — ազդում էին ոչ միայն մարդկանց ֆիզիկական տիպի, այլև նրանց հոգեկան կազմի կամ բնավորության վրա»¹⁵:

Ազգային ինքնագիտակցությունը հզոր գործոն է, տվյալ ազգին պատկանելու զգացումը իր գոյությունը շարունակում է պահպանել անգամ այն դեպքում, երբ ազգը բնորոշող այլ լեզվի, տարածքի ընդհանրության հատկանիշները ինչ-ինչ պատճառներով վերանում են:

Ազգերի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի բուռն զարգացման հետևանքով, սոցիալիզմի պայմաններում, ազգային ինքնագիտակցությունը զտվում, բյուրեղանում և մաքրվում է այն հասկացություններից, որոնք բնորոշ էին շահագործողական հասարակությանը: Ազգի կենսունակությունը պայմանավորված է ազգային ինքնագիտակցության մակարդակով:

Ազգի էթնոտարբերիչ երրորդ հատկանիշը լեզվի ընդհանրությունն է: էթնոսի բոլոր հանրույթները կապված են լեզվի միջոցով: Լեզուն ժողովրդի կյանքում ծառայում է իբրև հաղորդակցման կարևորագույն միջոց, այն խոսողական նորմաների ամբողջական համակարգ է, որ գոյություն ունի տվյալ հանրույթի յուրաքանչյուր անդամի գիտակցության մեջ:

Լեզուն այն հիմնական հատկանիշներից մեկն է, որով բազմաթիվ ազգեր տարբերվում են միմյանցից: Սակայն գոյություն ունեն տարբեր ազգեր, որոնք խոսում են միևնույն լեզվով, այս դեպքում լեզուն նրանց ոչ թե բաժանում, այլ միավորում է: Միևնույն լեզուն մի քանի ազգերի համար դառնում է հատկանիշ, բայց այս դեպքում լեզուն հանդես է գալիս միայն հաղորդակցման միջոց լինելու իր դերով, իսկ մնացած դեպքերում՝ մարդկանց հոգեկան աշխարհի ձևավորման կամ հոգևոր մշակույթի ստեղծման հարցում մնում է ազգային: Լեզուն հարատևում է այնքան, որքան գոյատևում է նրանով խոսող ժողովուրդը: Սակայն լեզվական ձուլումը անմիջականորեն չի տանում էթնի-

¹⁴ «Սովետական Հայաստան», 19 փետրվարի, 1988 թ.:

¹⁵ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Եր., 1976, էջ 305:

կական ձուլման, բայց դրա համար ստեղծում է նպաստավոր պայմաններ:

Ազգի էթնոտարբերիչ շորրորդ հատկանիշը հոգեկան կերտվածքի ընդհանրությունն է, որը սերնդեսերունդ մշակվում է տարբեր ազգերի մեջ, գոյություն ու միատեսակ պայմանների հետևանքով: Ազգային բնավորությունն ամենից առաջ արտահայտվում է տվյալ ազգային ընդհանրության անդամներին հատուկ մտածողության և գործողության եղանակի յուրահատկությամբ, իսկ հոգեկան կերտվածքը՝ ընդհանուր սովորույթների, ավանդույթների, կենցաղի առանձնահատկություններով: Հոգեկան կերտվածքը ձևավորվում է միևնույն աշխարհագրական միջավայրում, տվյալ ազգության բաղմամբիվ սերունդների կյանքի ընթացքում:

Բանվոր դասակարգի քաղաքական պայքարի ասպարեզ մտնելուց հետո էական փոփոխության են ենթարկվում ազգային հոգեբանության շատ տարրեր: Չէ՞ որ, ինչպես Մարքսն ու էնգելսն են նշում, «տիրապետող դասակարգի մտքերը յուրաքանչյուր դարաշրջանում հանդիսանում են տիրապետող մշտրեր»¹⁶:

Սոցիալիստական համաժողովրդական սեփականության հաստատման հետ առաջ եկան հոգևոր կերտվածքի այնպիսի առանձնահատուկ հասկացություններ, ինչպիսիք են կոլեկտիվիզմը, ընկերական փոխօգնությունը և այլն:

Մի ազգը մյուսներից զանազանող այս շորս հատկանիշները աչքի են ընկնում հարաբերական կայունությամբ: Մինչև սոցիալիստական ազգերի առաջացումը՝ այդ հատկանիշներն անընդհատ զարգացել, ամբողջացել ու կատարելագործվել են, բայց արմատական փոփոխությունների չեն ենթարկվել: Իսկ սոցիալիստական ազգը մարդկային նախորդ հանրություններից՝ բուրժուական ազգից, ֆեոդալական ու ստրկատիրական ազգույթից և տոհմացեղային միություններից զանազանող հատկանիշներն աչքի են ընկնում մեծ դինամիկությամբ: Յուրաքանչյուր հանրույթում նրանք արմատական որակական փոփոխման են ենթարկվում:

Պատմական անհավասարաչափ զարգացման հետևանքով տարբեր ազգեր տարբեր ժամանակներում ու տարբեր հանգամանքներում են կազմավորվել: Որոշ ազգություններ ձևավորվեցին ստրկատիրական հասարակարգում, ուրիշները՝ ֆեոդալիզմի: Որոշ սոցիալիստական ազգեր ձևավորվեցին բուրժուական ազգերի փլատակների վրա, ուրիշները՝ նախազգային հանրույթներից շրջանցելով արտադրության կապիտալիստական եղանակը, դարձան սոցիալիստական ազգեր և այլն:

Սոցիալիստական ազգը նախորդ հանրույթներից տարբերող առաջին հանրորոշ հատկանիշը տնտեսական կյանքի ընդհանրությունն է: Տնտեսական կապի ձևերն ու եղանակները զարգացման առանձինից ընդհանուրին անցնելու ընդգծված միտում ունեն: Նախնադարյան հասարակարգում տնտեսությունը հանդես էր գալիս խիստ մասնատված ձևով: Դասակարգերի ու պետության առաջացման հետ ընդլայնվում է ազգության տնտեսական հիմքը: Ինչպես նշում է Կ. Մարքսը, «...այն հիմքը, որի վրա ամեն մի նոր դասակարգ հաստատում է իր տիրապետությունը, ավելի լայն է այն հիմքից, որի վրա հենվում էր նրանցից առաջ տիրապետած դասակարգը»¹⁷: Եթե նախնադարյան մարդկանց յուրաքանչյուր կոլեկտիվ աշխատանքի իր միջոցներով իրենից ներկայացնում էր ինքնուրույն տնտեսական միավոր, ապա գնալով առանձին համայնքի էկոնոմիկական կորցնում էր իր ինքնամփոփ բնույթը: Առաջանում է միջհամայնական արտադրական մասնագիտացում, որը պահանջում է հա-

¹⁶ Կ. Մարքս, Ց. էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 52—53:

¹⁷ Նույն տեղում, էջ 53:

մայնքների մշտական տնտեսական կապեր իրար հետ: Աստիճանաբար ազգակից ցեղերից ու ցեղային միություններից առաջանում են ստրկատիրական ազգությունները: Կազմավորվող ազգությունը հանդես է գալիս նաև որպես տնտեսական կյանքի ընդհանրություն: Սակայն այդ ընդհանրությունն այնքան ուժեղ չէր, որ տնտեսապես միավորեր ազգության բոլոր մասերը, կապակցեր նրանց միասնական շուկայով: Թույլ տնտեսական կապերը, բնամթերային տնտեսությունը ստրկատիրական ու ֆեոդալական ազգութիւնների պահում էին տնտեսական մասնատվածության պայմաններում: Ֆեոդալական տնտեսությունը ներքաշվեց շուկայական շրջապտույտի մեջ: Ֆեոդալական էկոնոմիկայի ընդերքում ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը նպաստեց համազգային ու միջազգային շուկայի ստեղծմանը: Սաղմնավորվող բուրժուական հասարակական հարաբերություններին զուգընթաց ձևավորվում է մարդկանց հանրույթի մինչ այդ եղած ձևերից ամենամբողջականը՝ ազգը: Վ. Ի. Լենինը, խոսելով ուսական ազգի առաջացման մասին, գրում է. «...Սակայն այն ժամանակ (միջին դարերում—Չ. Մ.) հազիվ թե կարելի լիներ խոսել ազգային կապերի մասին բառիս բուն իմաստով. պետությունը բաժանվում էր առանձին «երկրների», մասամբ նույնիսկ իշխանությունների, որոնք պահպանում էին առաջվա ինքնուրույնության կենդանի հետքերը, կառավարման առանձնահատկությունները, երբեմն իրենց հատուկ զորքերը (տեղական բոյարները իրենց գնդերով էին պատերազմ գնում), առանձին մաքսային սահմանները և այլն: Թուսաց պատմության միայն նոր շրջանն է (մոտավորապես 17-րդ դարից սկսած), որ բնորոշվում է բոլոր այդպիսի մարզերի, երկրների ու իշխանությունների իսկապես փաստական միաձուլումով մի ամբողջության մեջ: Այդ միաձուլումը կյանքի էր կոչվել ոչ թե սոհմային կապերի հետևանքով..., այլ մարզերի միջև ուժեղացող փոխանակության, աստիճանաբար աճող ապրանքաշրջանառության, տեղական փոքրիկ շուկաները համառուսաստանյան մեկ շուկայի մեջ համակենտրոնացնելու հետևանքով»¹⁸:

Կապիտալիզմի ժամանակ ազգի տնտեսական կյանքի ընդհանրությունն արտահայտվում է նրա տարբեր հատվածների միավորմամբ, տնտեսական կապերի ամրապնդմամբ: Սակայն տնտեսական կյանքի իսկական համազգային ընդհանրությունն ի հայտ եկավ սոցիալիստական ազգերի առաջացման ու զարգացման հետ զուգընթաց: Սոցիալիստական ազգերի տնտեսական ընդհանրությունը խարսխվում է ազգի տարբեր հատվածների ներգրավմամբ մի տնտեսական միասնության մեջ, որի հիմքն է կազմում արտադրության միջոցների հանրային սեփականությունը: Սոցիալիզմի ժամանակ ազգերի տնտեսական կյանքի ընդհանրությունը հանդես է գալիս ոչ միայն որպես մարդկանց մեջ գոյություն ունեցող տնտեսական կապ, այլ որպես հասարակության բոլոր սոցիալական խմբերի և դասակարգերի արմատական շահերի ընդհանրություն:

Սոցիալիստական ազգի տնտեսական կյանքի զարգացման օրինաչափություններից մեկն էլ ազգերի տնտեսական կյանքի հիմքերի և դրանց զարգացման մակարդակների նախկին անհավասարության վերացումն է, նրանց փաստական տնտեսական հավասարության հաստատումը: «Հեռանկարի առումով մշակելով ազգային քաղաքականության հիմնական ուղղությունները,— նշում է Մ. Ս. Գորբաչովը ՍՄԿԿ 27-րդ համագումարին տված հաշվետվության մեջ,— առանձնապես կարևոր է հոգալ, որ միասնական ժողովրդատնտեսական

¹⁸ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 1, էջ 179:

կումպլեքսի զարգացման մեջ բոլոր հանրապետությունների ավանդոր համապատասխանի նրանց տնտեսական ու հոգևոր հարաճուն պոտենցիալին: Հանրապետությունների արտադրական կոպերացման, համագործակցության և փոխօգնության զարգացումը բխում է մեր բազմազգ պետության և յուրաքանչյուր հանրապետության բարձրագույն շահերից»¹⁹:

Սոցիալիստական ազգի երկրորդ հանրորոշ հատկանիշը նրա սոցիալ-դասակարգային կառուցվածքն է: Սոցիալական կառուցվածքը մարդկանց սոցիալական գործունեության կազմակերպման օբյեկտիվ ձև է, հասարակական խումբերի և անհատների միջև փոխհարաբերությունների համակարգ, որն իր մեջ ընդգրկում է բնակչության սոցիալական կազմը, որոշում նրանցից յուրքանչյուրի տեղը և դերը հասարակական կառուցվածքում:

Աշխատանքի հասարակական բաժանումների հետևանքով դեռևս նախնադարյան հասարակարգում տոհմական համայնքների ներսում սաղմնավորվում են սոցիալական խմբեր: Ստրկատիրական ազգության ձևավորմանը զուգընթաց ձևավորվում են երկու հիմնական դասակարգերը՝ ստրուկներն ու ստրկատերերը: «Հասարակական դասակարգերը...,— նշում է Էնգելսը,— իրենց հարաշրջանի տնտեսական հարաբերությունների արդյունքն են»²⁰:

Ստրկատիրական և ֆեոդալական ազգությունները միայն ստրուկներից և ստրկատերերից կամ հողատեր ֆեոդալներից և ճորտ գյուղացիներից չէին բաղկացած: Դասակարգային տարբերությունները պետական իշխանության օգնությամբ իրավաբանորեն ամրակցվում են նաև բնակչության դասային բաժանման մեջ: Իսկ դասերը այնպիսի հասարակական խմբեր են, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն հասարակության մեջ ունեցած իրենց փաստական դիրքով, այլև պետության մեջ գրաված տեղով:

Կապիտալիստական արտադրանեղանակը պարզեցրեց ազգի դասակարգային կառուցվածքը, վերացրեց դասային արտոնությունները: Անմիջական արտադրողները՝ բանվորները, ստացան իրավական ազատություն, բայց մնացին սեփականազուրկ և տնտեսապես կախված ազգային բուրժուազիայից: Հիմնական դասակարգերի հետ միասին սոցիալական կառուցվածքի կազմում հանդես են գալիս նաև ոչ հիմնական կամ անցումային դասակարգեր, որոնք պայմանավորված են նախորդ արտադրանեղանակների մնացուկների պահպանմամբ կամ նոր արտադրանեղանակի սաղմերի առկայությամբ:

Արտադրության զարգացման հետ փոխվում է ազգի դասակարգային կառուցվածքը: Մեծանում է մտավորականության և ծառայողների տեսակարար կշիռը:

Կապիտալիզմի ժամանակ ազգի սոցիալական շարժունակությունը ավելի մեծ է, քան ֆեոդալիզմի: Սոցիալիզմի ժամանակ ազգի ներսում ձևավորվում են նոր սոցիալ-դասակարգային հարաբերություններ: Սոցիալիստական ազգը հասարակությունը չի բաժանում մարդկանց այնպիսի խմբերի, որոնցից մեկը, շնորհիվ հասարակական արտադրության համակարգում գրաված իր տեղի, կարողանա յուրացնել մյուսների աշխատանքի արդյունքները: Սակայն դասակարգերը սոցիալիզմի ժամանակ դեռևս լիովին չեն անհետանում: Նոր որակական հատկանիշներով պահպանում է իր գոյությունը բանվոր դասակարգը, ձևավորվում է կոոպերացված-կոլտնտեսային գյուղացիության դասակարգը և սոցիալիստական մտավորականությունը, որպես սոցիալական միջնախավ: Առանձնապես պետք է ընդգծել բանվոր դասակարգի դերը՝ որ-

¹⁹ ՄՄԿԿ 27-րդ համագումարի նյութերը, էջ 74:

²⁰ Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, Եր., 1967, էջ 33:

պես հասարակութեան սոցիալ-քաղաքական առաջատար ուժի: «Սովետական հասարակութեան մեջ,— նշում է ընկ. Մ. Ս. Գորբաչովը,— ամանգարդային տեղը պատկանում է բանվոր դասակարգին: Բանվոր դասակարգը սոցիալիստական արտադրութեան սիստեմում ունեցած իր դիրքի, քաղաքական փորձի, բարձր գիտակցութեան ու կազմակերպվածութեան, աշխատանքային և քաղաքական ակտիվութեան շնորհիվ համախմբում է մեր հասարակութունը, առաջատար դեր խաղում սոցիալիզմի կատարելագործման, կոմունիստական շինարարութեան ասպարեզում»²¹:

Սոցիալիստական ազգի դասակարգային կառուցվածքում գյուղացիութեան դերը նույնպես բարձրացել է: Մանր սեփականատերերի դասակարգից վեր է ածվել կոլտնտեսային գյուղացիների դասակարգի, նոր հասարակական ուժի:

Սոցիալիստական ազգի սոցիալական կառուցվածքում իր հատուկ տեղն ունի ժողովրդական մտավորականութունը: Արտադրողական ուժերի անընդհատ կատարելագործումը հանգեցնում է նյութական արտադրութեան մեջ մտավոր աշխատանքի տեսակարար կշռի աճին:

Սոցիալիստական հասարակութեան սոցիալական կառուցվածքը բնութագրվում է աշխատավորների բարեկամ դասակարգերի ու խմբերի առկայութեամբ, նրանց տնտեսական, սոցիալ-քաղաքական և գաղափարական շահերի միասնութեամբ:

Սոցիալիստական ազգը նախորդ հանրութուններից տարբերող հանրորոշ երրորդ հատկանիշը նրա քաղաքական համակարգն է: Այն դասակարգերի, ազգերի պետութունների միջև քաղաքական փոխհարաբերութունները կարգավորող հաստատութունների համակարգն է:

Տոհմացեղային հասարակութեան մեջ սոցիալական հարաբերութունները կարգավորվում էին սովորույթներով ու ավանդույթներով, որոնց մեջ մարմնավորվում էր համատեղ կյանքի ու աշխատանքի բազմադարյան փորձը: Մասնավոր սեփականութեան երևան գալը և հասարակութեան բաժանումը դասակարգերի բարդացնում են հասարակութեան սոցիալական կյանքը: Ունևոր և ունեզուրկ դասակարգերի առաջացման հետ միասին առաջ է գալիս և դասակարգային տիրապետութեան գործիք՝ պետութունը: Սաղմնավորվում են նաև քաղաքական կազմակերպութունները:

Հակամարտ հասարակութեան քաղաքական համակարգն իր բարձրագույն զարգացմանն է հասնում կապիտալիզմի ժամանակ, երբ վերջնականապես ձևավորվում են բուրժուական ազգերը: Ի հակադրութուն ֆեոդալական դասային անհավասարութեան, մարդիկ օրենքի առաջ ձեռք են բերում իրավական-ձևական հավասարութուն: Ֆեոդալական միապետութունը տեղը զիջում է հանրապետությանը կամ սահմանադրական միապետությանը: Քաղաքական կուսակցութունները պետութեան հետ միասին կարևորագույն տեղ են գրավում ազգի քաղաքական կազմակերպվածքի համակարգում:

Սոցիալիստական ազգի ձևավորման ու կատարելագործման ընթացքն ուղեկցվում է կառավարման ամբողջ քաղաքական համակարգի դեմոկրատացումով, հասարակութեան կառավարման մեջ աշխատավորների դերի անշեղ բարձրացումով: «...Հասարակութեան զարգացման արագացումը,— նշվում է Մ. Ս. Գորբաչովի ՍՄԿ 27-րդ համագումարին տված զեկուցման մեջ,— աներևակայելի և անհնար է առանց սոցիալիստական դեմոկրատիայի, նրա բոլոր կողմերի ու դրսևորումների հետագա զարգացման»²²:

Սոցիալիստական ազգը նախորդ հանրութուններից տարբերող շորրորդ

²¹ ՍՄԿ 27-րդ համագումարի նյութերը, էջ 70:

²² ՍՄԿ 27-րդ համագումարի նյութերը, էջ 76:

հատկանիշը գաղափարախոսական ընդհանրությունն է: Այն հայացքների և գաղափարների որոշակի համակարգ է և արտացոլում է մարդկանց վերաբերմունքն արտաքին աշխարհի ու միմյանց նկատմամբ և ծառայում է կամ գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների ամրապնդմանը, կամ նրանց փոփոխմանն ու զարգացմանը: Գաղափարախոսությունը հանդես է գալիս քաղաքական, իրավական, բարոյական, գիտական, կրոնական, գեղագիտական փիլիսոփայական հայացքների ձևով: Գաղափարախոսությունն օժտված է զարգացման ներքին օրինաչափություններով՝ գաղափարների հաջորդականության և ժառանգման սկզբունքներով: Լինելով տվյալ պատմական պայմանների արտահայտություն, յուրաքանչյուր գաղափարախոսություն ներառում է նախորդ տիրապետող գաղափարների առաջադիմական նվաճումները: Գաղափարախոսությունը իրականացնում է որոշակի սոցիալական ֆունկցիաներ: Դասակարգային հասարակությունում նա մշակում է այս կամ այն դասակարգի շահերին համապատասխան մտածելակերպ, քաղաքական վարքագիծ և սոցիալական գործունեության ծրագիր:

Գաղափարախոսության տարրերը ծագել են տոհմական համայնքի առաջացման հետ:

Ստրկատիրական ազգույթի առաջացման հետ ձևավորվում է համազգային կրոնը՝ հեթանոսությունը: Ազգային աստվածների իշխանությունը դեռևս տվյալ ազգի սահմաններից դուրս չէր տարածվում: Բացի կրոնական միստիկական հայացքներից, ստրկատիրական հասարակարգում սաղմնավորվում են փիլիսոփայական աշխարհայացքների համարյա բոլոր հետագա տիպերը:

Ֆեոդալական ազգությունների ձևավորման զուգընթաց տարբեր երկրների ու ժողովուրդների միջև աշխուժացող քաղաքական, տնտեսական, մշակութային կապերը պայմաններ են ստեղծում համաշխարհային կրոնների առաջացման համար:

Եվրոպայում ֆեոդալական ազգության տիրապետող գաղափարախոսությունը քրիստոնեությունն էր, որը թափանցում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, դառնալով իշխող դասակարգի կրոն, սրբազործում է ֆեոդալների տիրապետությունը գյուղացիների վրա: Ֆեոդալական ազգության համար քրիստոնեությունը դառնում է պետական գաղափարախոսություն, իսկ եկեղեցին՝ պետական ապարատի բաղկացուցիչ մաս:

Ֆեոդալական հարաբերությունների ճգնաժամի և բուրժուական հարաբերությունների սաղմնավորմանը զուգընթաց խոր ճգնաժամ է ապրում ինչպես ողջ ֆեոդալական գաղափարախոսությունը, այնպես էլ եկեղեցին: Եվրոպայում ռեֆորմացիայի դարաշրջանում բարձրացող բուրժուազիան պայքար է ծավալում նաև եկեղեցու դեմ, որպես ֆեոդալիզմի հոգևոր հենարանի: «Բուրժուազիան, — նշում են Մարքսն ու Էնգելսը, — ամենուրեք որտեղ տիրապետության հասավ, խորտակեց բոլոր ֆեոդալական, նահապետական, իդիլիական հարաբերությունները: Նա անողոքաբար կտրատեց այն խայտաբղետ ֆեոդալական կապանքները, որոնք ամրացնում էին մարդուն նրա «բնական տերերին», և մարդկանց միջև ոչ մի այլ կապ չթողեց, բացի մերկ շահից, անսիրտ «կանխիկ փողից»: Ծսամով հաշվի սառցաջրի մեջ նա խեղդեց կրոնական էքստազի, ասպետական խանդավառության, քաղքենիական սենտիմենտալության սրբադան սարսուռը»²³:

Բուրժուազիայի վերելքի ժամանակաշրջանում, տնտեսական զարգացման օրյիկտիվ ընթացքն իր արտացոլումն է գտնում նրա գաղափարախոսու-

²³ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Եր. 1984, էջ 47:

թյան մեջ, որը քիչ պատրանքներ չի ստեղծում անցողիկ բուրժուական կարգը սրբագործելու ու հավերժացնելու համար: Բուրժուական գաղափարախոսության հիմնական առանցքը վարձու ստրկությունն արդարացնելն էր, իսկ գիտական կոմունիզմի առաջացմանն ու զարգացմանը զուգընթաց՝ հակակոմունիզմը: Մարքսիզմի դեմ ուղղված բուրժուական գաղափարախոսությունների հիմնական նպատակն էր ծխտել հասարակական կյանքի զարգացման օրյեկտիվ՝ օրինաչափությունները և թերագնահատել ու իմաստազրկել պրոլետարիատի հեղափոխական շարժումները:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո սոցիալիստական ազգի գաղափարախոսական հիմքը դարձավ մարքսիզմ-լենինիզմը: Գիտականորեն հիմնավորելով արգի հասարակական զարգացման արմատական խնդիրները՝ մարքս-լենինյան գաղափարախոսությունը հանդես է գալիս իբրև կոմունիստական շարժման տեսական հիմք, իբրև աշխարհը հեղափոխականորեն վերափոխելու հզոր զենք:

Ինչպես տեսնում ենք, սոցիալիստական ազգը նախորդ հանրություններից տարբերող շորս հատկանիշները յուրաքանչյուր հանրությամբ արմատական փոփոխման են ենթարկվում, իրենք պայմանավորվում են հանրության ձևովով, միաժամանակ իրենցով պայմանավորում հանրության բնույթը, այդ հիման վրա էլ այդ հատկանիշները անվանել ենք հանրորոշ:

Այսպիսով, սոցիալիստական ազգը կապիտալիզմը հեղափոխական ճանապարհով վերացնելու և սոցիալիզմի հաղթանակի պրոցեսում բուրժուական ազգից, իսկ սոցիալիզմի առկայության պայմաններում նաև ազգային-ազատագրական հեղափոխությունների հետևանքով նախազգային հանրություններից առաջացած մարդկանց այն նոր սոցիալական ընդհանրությունն է, որն ունի տարածքի, էթնիկական պատկանելության, լեզվի, հոգեկան կերտվածքի, տնտեսական կյանքի, քաղաքական որոշակի համակարգի, սոցիալ-դասակարգային կառուցվածքի և գաղափարախոսության ընդհանրություն:

Սոցիալիզմի կատարելագործման ընթացքում ազգի հանրորոշ հատկանիշները աստիճանաբար կվերափոխվեն հանրության զարգացման մակարդակին համապատասխան, իսկ էթնոտարբերիչ հատկանիշներն աճելի երկար ժամանակ կպահպանեն իրենց գոյությունը:

Г. Г. МАНУЧАРЯН—Признаки социалистической нации.—В статье признаки нации впервые рассматриваются по двум группам закономерностей. К первой относятся признаки, по которым одна нация отличается от другой: общность территории, происхождения, языка, психического склада, которые являются в сущности этноразличительными чертами. Вторая группа признаков—те, по которым нация отличается от национальной общности: единство экономической жизни, социальной структуры, политического строя и идеологии. Они, определяя уровень общности. Этот аспект, согласно автору, дает возможность решить многие национальные вопросы.